« 17 ».11 .2022

Երևանի տարածաշրջանային N 1 պետական քոլեջ
Կառավարման խորհրդի 4-րդ
հեռավար նիստի արձանագրություն

Նիստին ներկա էին Լ. Շահնազարյանը, Ա.Հարությունյանը, Ն.Մովսիսյանը, Մ.Ժամկոչյանը, Տ.Եգանյանը, Ս.Մուրադյանը, Ն.Կարապետյանը, Ա.Նավասարդյանը, Ս. Պետրոսյանը, Ե.Մարգարյանը, Ա.Ավետիսյանը, Լ.Ղազարյանը, Տ.Շահնազարյանը և քոլեջի տնօրեն Պ.Սանթրոսյանը:

Օրակարգ

1.Քոլեջի նախահաշվի քննարկում և հաստատում

2. Տնօրենի մրցույթի մասին

Տնօրեն Պ.Սանթրոսյանը ներկայացրեց քոլեջի նոր նախահաշիվը՝ 2022-2023 ուս-տարվա ընդունելության արդյունքներով: Ֆինանսավորման արդյունքում քոլեջը կավարտի ֆինանսական տարին մոտ 10 միլիոն դրամ մնացորդով, ինչը հնարավորություն կտա 2023 թվականի հունվարի աշխատավարձը վճարել տվյալ ամսվա վերջին և չսպասել մինչև նախարարության կողմից ֆինանսավորումը, որը տարեսկզբին կատարվում է փետրվար ամսվա մինչև 15-ը:

Նաև տեղեկացրեց, որ 2022 թվականի ընթացքում քոլեջի բոլոր աշխատակիցները 2 անգամ խրախուսվել են՝ մեկ անգամ իրենց աշխատավարձի 100%-ի, 2-րդ անգամ՝ 40%-ի չափով: Ուսման վարձերի արդյունավետ հավաքագրման արդյունքում տարեվերջին հնարավոր կլինի աշխատակիցներին խրախուսել ևս մեկ անգամ իրենց աշխատավարձի մինչև 20%-ի չափով:

2.Պ.Սանթրոսյանը տեղեկացրեց, որ հաջողությամբ հանձնել է տնօրենի հավաստագիր ստանալու քննությունը և ստացել համապատասխան Հավաստագիր: Կարգով անհրաժեշտ է, որ իր պայմանագրի ժամկետի ավարտից (01.03.2023թ) 3 ամիս առաջ խորհրդի որոշմամբ և խորհրդի նախագահի կողմից կազմվի տնօրենի թափուր տեղի վերաբերյալ մրցույթի հայտարարություն և հրապարակվի ,,Կրթություն,, շաբաթաթերթում (դեկտեմբերի 7-15-ը ժամանակահատվածում) և հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից ընդունվեն հավակնորդների գործերը: Գործերի ընդունման ավարտից հետո 7-րդ աշխատանքային օրը կկայանա քոլեջի տնօրենի թափուր տեղի համար մրցույթը՝ խորհրդի անդամների առնվազն 2/3-ի մասնակցության պարագայում:

Խորհուրդը որոշեց՝

1. Հաստատել նախահաշիվը
2. Խորհրդի նախագահին և քարտուղարին՝ կազմակերպել Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջ ՊՈԱԿԸ տնօրենի թափուր տեղի մրցույթի հետ կապված անհրաժեշտ գործընթացն ու արդյունքների մասին տեղեկացնել խորհրդի բոլոր անդամներին և ԿԳՄՍ նախարարությանը:

Նիստն ավարտվեց:

Նախագահ՝ Լ.Շահնազարյան

Քարտուղար՝ Ե. Մարգարյան

Քաղվածք

Երևանի տարածաշրջանային N 1 պետական քոլեջի

Կառավարման խորհրդի 4-րդ

հեռավար նիստի արձանագրության

« 17 ».11 .2022թ.

Օրակարգ

1.Քոլեջի նախահաշվի քննարկում և հաստատում

Խորհուրդը որոշեց՝ 1.Հաստատել նախահաշիվը և ներկայացնել ԿԳՄՍ նախարարություն:

Նիստի քարտուղար՝ Ե. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Արձանագրություն N4

Կառավարման խորհրդի հեռավար նիստի

09.07.2022թ.

Մասնակցում էին

Լ. Շահնազարյանը, Ս. Մուրադյանը,Ա. Նավասարդյանը, Ս. Պետրոսյանը, Ե. Մարգարյանը, Տ.Եգանյանը, Վ. Պապոյանը, Ա.Թաթարյանը, Ն. Խաչատրյանը և Պ.Սանթրոսյանը:

Օրակարգ

I. Պետական որակավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների ներկայացում
II. Քոլեջի գործունեության ներքին գնահատման հարցաշարի և ուսումնական աշխատանքների գծով տեղակալի տարեկան հաշվետվության քննարկում
III. 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության քննական հանձնաժողովների նախագահների թեկնածուների առաջադրում

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ Պ. Սանթրոսյանը խորհրդին ներկայացրեց հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները՝ ըստ մասնագիտությունների (հաշվետվությունները կցվում են):

Խորհուրդն ուսումնասիրեց պետական որակավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները և ընդունեց առ ի գիտություն :

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ Պ. Սանթրոսյանը խորհրդին ներկայացրեց քոլեջի գործունեության ներքին գնահատման հարցաշարը և ուսումնական աշխատանքների գծով տեղակալի տարեկան հաշվետվությունը (հարցաշարը և հաշվետվությունը կցվում են):

Հաշվի առնելով, որ առաջիկայում նոր ձևավորված Կառավարման խորհրդի նախագահի, տեղակալի և քարտուղարի համար պետք է կայանան ընտրություններ՝ օրակարգի երրորդ հարցով տնօրեն պրն Պ.Սանթրոսյանը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա

ընդունելության քննական հանձնաժողովների նախագահների թեկնածությունները՝ ըստ մասնագիտությունների.

1.«Դերասանական արվեստ»- Լազյան Սիրանուշ՝ Երևանի պատանի հանդիսատեսի պետական թատրոնի դերասանուհի:

2.«Ռեժիսուրա»- Լազյան Սիրանուշ՝ Երևանի պատանի հանդիսատեսի պետական թատրոնի դերասանուհի:

3.«Պարի ուսուցում»- Ադամյան Սվետլանա՝ Երևանի թիվ 68 մանկապարտեզի պարուսույց, «ՊՐՈՖ ԱՐՏ ԴԱՆՍ» համույթի մենապարուհի և պարուսույց, Վանուշ Խանամիրյանի անվան «Բարդիներ» պարային համույթի մենապարուհի:

Խորհուրդն ուսումնասիրեց և հավանության արժանացրեց քոլեջի գործունեության ներքին գնահատման հարցաշարը, ուսումնական աշխատանքների գծով տեղակալի տարեկան հաշվետվությունը և քննական հանձնաժողովների նախագահների թեկնածությունները:

Նիստը փակվեց:

Նախագահ՝ Լիլիթ Շահնազարյան

Քարտուղար՝ Եվա Մարգարյան